



16. ԲՈՒՌՈՒԿԵՍ

Մե մարթ է ըլնում, մե կնիգ է ունենում:

Մեզ օր կնիգը մարթուն ասում է.—Այ մարթ, գնա՛ քաղաք, մե Հալիմդրիք ա՛ռ, բի՛:

Մարթն ասում է.—Հալա մե թիքա հա՛ց տուր, ուտեմ:

Կնիգն ասում է.—Լավ է, գնա՛, հիմի եղ գուքաս:

Մարթու ճարը կտրվում է, էրթում է քաղաք, Հալիմդրիք առնում է ու բերում է տուն:

Կնիգն ասում է.—Այ մարթ, որչանք ձավար կըտանի:

Մարթն ասում է՝ չեմ զիտի:

Կնիգը հուշունց է տալիս մարթուն և հեղ է դրկում՝ տիրոջն մոտ, օր հիմանա, տեսնի՛ որչանք ձավար կըտանի: Մարթը հեղ է էրթում ու հարցնում է կճուճ ծախողին:

Կճուճ ծախողն ասում է՝ բուռուկես:

Մարթը «բուռուկես, բուռուկես» ասելեն տուն է վերադառնում, օր մտեն չընկնի: Ճամփին դուչար է ըլնում մե մարթու, օր ցանք է անում: Ցանքվորը հենց հիմանում է, օր էտ իրա ցանքի հմար է ասում, բնա է անում էտուր ծեծելը, թե հո՞ւր ես ասում բուռուկես:

Մարթն ասում է.—Բա ի՞նչ ասեմ:

Ցանքվորն ասում է.—Ասա՛, մեզը հըզար անի:

Մարթը «Մեզը հըզար անի, մեզը հըզար անի» ասելեն գալիս է, Հասնում է մե քանի հոքու, որ մե մեռել են տանում թաղելու:

Էտ մարթիքը հենց հիմանում են, օր էտ իրանց մեռի հմար է ասում՝ «Մեզը հըզար անի», բնա են անում էտուր ծեծելը, թե հո՞ւր ես անում՝ մեզը հըզար անի:

Մարթն ասում է.—Բա ի՞նչ ասեմ:

Մարթիքն ասում են.—Ասա՛, էս մեզն ըլնի, էլ չըլնի:

Մարթը «էս մեզն ըլնի, էլ չըլնի, էս մեզն ըլնի, էլ չըլնի» ասելեն գալիս է, Հասնում է մե հաշնքի:

Հաշնքի մակարները հենց հիմանում են, օր իրանց հաշնքի հմար է ասում, բնա են անում ծեծելը ու ասում են.—Ասա՛, Համիշա էդ ձեր բանն ըլնի:

Մարթը «Համիշա էդ ձեր բանն ըլնի, համիշա էդ ձեր բանն ըլնի» ասելեն գալիս է, համնում մի քանի հոքու, օր ախաղ են դուս քցում: Մարթիքը հենց հիմանում են, օր իրանց ախաղ դուս քցելու հմար է ասում, բնա են անում էդ խեղջ մարթուն ծեծելը, թե դու հո՞ւր ես ասում՝ համիշա էդ ձեր բանն ըլնի:

Մարթն ասում է.—Բա ի՞նչ ասեմ:

Մարթիքն ասում են. —Էլ ոչինչ մի՛ ասի, կուսեկուս գնա՛:

Մարթը կուսեկուս գալիս է, համնում է զաքավորի ջորեքուն, որ չինի բառցած տանում են: Զորիքը տեհում են թե չէ, խոտնում են ու բեռները տալիս գեղին ու ջարթուփչուր են անում: Դաքավորի մարթիքը բոնում են էտ մարթուն ու տանում են, զընդընում:

Զընդընի մեջ էտ մարթը բնա է անում իրան-իրան խոսալը.

Ասի՛ բուռուկես, ծեծեցին,

Ասի՛ մեզը հըլար անի, ծեծեցին,

Ասի՛ էս մեզն ըլնի, էլ չըլնի, ծեծեցին,

Ասի՛ համիշա էդ ձեր բանն ըլնի, ծեծեցին,

Կուսեկուս էկա, ծեծեցին:

Հեփոր դաքավորի մարթիքը էս բանը լսում են, էրթում են դաքավորին թարիփ են անում: Դաքավորը հրամայում է, օր էդ զիժ մարթուն դեն անեն:

Դաքավորի մարթիքը դեն են անում էտուր՝ ասելով. —Կուսեկուս մի՛ էրթա, գլուխդ շախկ պահե՛ ու գնա՛:

Մարթը դունչը ցցած գալիս է, համնում է իրանց տան շեմքին. հենց իտենց ուզում է նի էրթա տուն, գլուխը գիր է անում բալավարին:

Ճվում է կնգան ու ասում է. —Այ կնիգ, դազմեն տեհում, իզա բալավարը քանդեմ, նի գամ:

Կնիգն ասում է. —Դե կուս կեցի՛ ու նի՛ արի:

Մարթն ասում է.—Զինի, դաքավորը դազաղան է արի:

Կնիգը դազմեն տալիս է մարթուն, մարթն ես ասում, բալավարը քանդում է, օր նի գա, տեհում է վախիլ մե բոռ է դուս գալիս ու նստում է կնգա ճակտին. մարթը դազմով տալիս է բոռին, օր սատկի, կպչում է կնգա ճակտին ու բոռի տեղ կնիգն է մեռնում:

Աստծուց հիրեք խնձոր վեր ընզավ, մեզն՝ ասողին, մեզը՝ լսողին, մեզն էլ՝ հանգաջ դնողին: